


փով կարենայ փոխանցուիլ. Փերիկլէս իմաստունը երկու ապուշներու հայր եղաւ. Սոկրատ ալ՝ ստորին արարածի մը: Ափսոս, եթէ ապուշութիւնը փոխանցելի է, հանձարը՝ փոխանցելի չէ ...*:

Փ. ՍԱՆԱՍԱՐ

(Վ Ե Ր Չ)

(* *) Այս յօդուածաշարքի պատրաստութեան համար լայն կերպով օգտուած եմ Jean Rostand ի Les Chromosomes գրքին, ուր հեղինակը ժողովրդական լեզով մը պարզած է ժառանդականութեան դաշտնիքներու մասին նորագոյն հետազոտութեանց արդիւնքները:



Ե. Գ.—(ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ).—Հասակ երկարելիք դեղերը կրնան օգտակար ըլլալ երէ գործածուիմ մանկութեան կամ ամենէն ուշը պատամեկութեան ատեն, բժշկական լուրջ քննութեմէ մը յետոյ եւ բժիշկին հսկողութեան տակ: — Զեր դրկած յայտարարութեան մէ: յիշատակուած միջոցը մարզական եղանակ մը ըլլալու է:

Մուրատ — ԴԱՄՄԱԿՈՍ.— Կրնաք մարզանք ընել եւ խազերու մասնակցիլ: Այսուհամդերձ նախընտրելի է որ գործողութիւն կատարող վիրաբոյժին կարծրքը առնելիք, որ աւելի ծանօթ է ձեր վիճակին:

Հ. Կ. ՎԱԼԱՆՍ.— Քամի որ առողջութիւնը լաւ է եւ գիշերային ֆրտինք յառաջ բերող կասկածելի պատմառ մը չունի, մի մտահոգուիք: Կ'եթքադրենք որ կամ իրիկունք շատ կ'ուտէ ու գիշերը անգիտակցաբար կը նեղուի, կամ շատ կը ծածկուի, կամ սեմեակը փոքր է ու պատուհամները գոց կը պառկի:

Ն. Ա. ՔՈԼՈՍՊ.— Psoriasis ը ժառանգական եւ փոխանցիկ չէ, պատճառը անծանօթ է. յանախ կը դարմանուի արմատապէս, բայց կրնայ երեւան գալ կարգ մը պայմաններու ազդեցութեան տակ, որոնք նշտուած չեն, հետեւարաք կարելի չէ նախազգուշական միջոցներ յանձնարարել: Դարմանումը կը կատարուի ներսէն եւ դուրսէն տրուած դեղերով, մասնաւոր դեղերու ներարկումներով: Այս մորքային հիւանդութիւնը ամուսնութեան համար արգելք մը չէ:

Օ.— ԺԵՆԸՎԻԼԻՒ. — Զեր նկարազրածը ջերմամիզութիւն չէ. այն ինչ որ կը հոսի, գրգռումի բնական հետեւանք է:

Ռ. Գ. ՌՕՆԻ. — Լեզուի ներմակութեան մասին գրած ենք (տե՛ս «ԲՈՒԺԱՆ»): Քանի որ լաւ կը մարսէք, անհանգստութիւն մը չունիք եւ այդ ուղղութեամբ գոհացուցիչ քննութիւն մը անցուցած էք, մի մտահոգուիք: Զեր բերանը եւ ակնաները միշտ մաքուր պահեցէք. երեկոյեան պառկելէ առաջ գաւաք մը vichy ի տաքցած ջուրը (մաս մը խմել եւ մաս մըն ալ բերանը ցօղուել օգտակար) կրնայ ըլլալ:

Գ. Դ.— ԼԱՊՈՒՏԱ.— Զեր ցնցդաստապիմ (ոլրօնչիք) համար օգտակար քելադրութիւն մը չենք կրնար ընել, որովհետեւ պէտք է քննել։ Դիմեցէք այդուն հաստատուած բժիշկի մը։

Տ. Տ. ԲԵԴՂԵՀԵՄ.— Կուրծքի, ամործիքի, կոնակի, ողնայարի ձեր ունեցած անորոշ ու պատահական ցաւերու մասին ձեր ըրած անորոշ հարցումներուն, անկարելի է որոշ պատասխան տալ։ Բազմաքիւ են այդ տեսակ ցաւերուն տեսակները, պատճառները եւ դարմանները։

Հ. ՔՕՆՍԹԱՆՑԱ.— Զեր կնոջ ամլութեան, ինչպէս նաև դաշտանի սկիզբը զգացած սաստիկ ցաւերուն պատճառներուն մասին, հեռուէն դժուար է կարծիք մը յայտնել եւ դարման յանձնարարել։ Հաւանարար արգանդին բերանը նեղ է։ բայց մէկ անգամ «Չիշ» խօթելով չի բացուիր։ Նաև կարգ մը ներծորային գեղաերու (ձուարանի, եւայլն) ամբաւականութիւն ունենալու է։ Կ'եմքադրենք միայն, որովհետեւ պէտք է քննել, սոուզելու համար հիմնական պատճառը կամ պատճառները, որոնք բազմազան են։ Դաշտանի առեն ցաւը ամոքելու համար, համդարտեցուցիչ դեղերը (օրկ. լաւտանում, ամքիփիրին) կարելի է գրեխով տալ սրբանէն։

Ի. Թ. ՄԱՐՍԵՅԼ.— Զեր ծանր խլութեան մասին կրնանք քելադրել միայն որ լաւ մասնագէտ մը տեսնէք։ Զեր նկարագրութենէն դատելով, կը կարծենք որ արմատապէս բուժելու մասին պէտք չէ շատ յոյս տածել։ Բայց մասնաւոր գործիքներով եւ վերակրթութեամբ (reéducation) հաւանարար կարելի ըլլայ քիչ մը լսել։

Գ. Տ. ՄԱՐՍԵՅԼ.— Կ'երեւի այդ գիշեր ծանր նաշ մը ըրած էիք. գիշերային մղաւանքներու կարեւոր պատճառներէն մէկն է անմարսողութիւնը։

Ի.— Մածումը ստամուսին չի վնասեր. բայց կարգ մը ստամուսներ կրնան չտանիլ։ Գլխաւորարար աղիքները հականեխող ազդեցութիւն ունի։— Զեր յիշած ուսելիքները — քաքաօ, շոքոլա, լեմոն, քէյ, հաւկիք — զանազան ձեւով պնդութիւն կ'առաջացնեն (իրենց որակով, կամ քանակով կամ պարունակած տարբերով)։ Ֆրանկախուէ առաջացած պնդութեան մը մասին գաղափար չունինք. Ֆրանկախուը կրնայ կարգ մը գործարաններ խանգարել եւ անուղղակի պնդութիւն պատճառել։ — Ֆրանկախուի դարմանումի համար ձեր ըրած հարցումներուն անկարելի է պատասխանել, առանց նախապէս քննելու ձեր այժմու վիճակը։— Նոյնպէս «գեղաերու հիւանդութեանց» մասին։

..... Զեր տուած տեղեկութիւններէն այնպէս կը հետեւցնենք քէ ձեր ունեցածք իսկական անկարողութիւն չէ, այլ արդիւնք է չափազանց դիւրայուզութեան, որ ամէմինփափուկ վայրկեանին ձեր ուժերը կը ջլատէ...։ Աւելի համդարտեցնող քան քէ գրգռիչ-գօրացուցիչ դեղերու պէտք ունիք։ Այս ուղղութեամբ ձեր բժիշկին կարծիքը առէ։

Le Gérant : Dr. L. Krikorian